

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ (1)

Ա Յ Ն Թ Ա Պ




Ալեքսանդր Ս. Աստուածածին եկեղեցին մզկիթի վերածում

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ԳԼԽԱԻՈՐ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԸ



ՏԵՐ ՆԵՐՍԷՍ Ա. ՔԷՆՅՑ. ԱՏՈՒՐ ԼԵՒՈՆԵԱՆ ԱՒԵՏԻՍ ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ ԹԱՌՈՒԳՃԵԱՆ



Ալեքսանդրի ձեռագործ

ԱՅՆԹԱՊԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՔԱՅԼԵՐԳ

Խօսք՝ 3. Աղայեանի եղանակ՝ Լեւոն 3. Լեւոնեանի (Թ. Լեւոն)

Հեռու կեցեք, դուք վախկոտներ, Մենք նոր սերունդ նոր Հայկեան. Մկրտուած ենք հայ արիւնով Դիւցազներուն որ ինկան:

Մկրտուած ենք հայ արիւնով Դիւցազներուն որ ինկան:

Չայնը ահեղ մեր ռուսներուն, Ի զէն հայեր կը գոռան. Նահատակաց թարմ դիակներ, Հողին տակէն կը խայտան:

Ա՛խ, հայրենիք, դու Կիլիկիա, Սրբէ՛ արցունքդ ալ յետին, Ձի թո սիրոյդ տառապանքիդ Ապրիլ գիտցաւ Այնթապցին:

ՔԷՄՓԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Գաղթականները աստիճանաբար կը շատնային, եւ ահա օր մը վեր. Հատիտեան, ձգելով քաղաքի եկեղեցին, կը ստանձնէ թմբիկի եկեղեցիի հովուութեան աւելի բարձր եւ հաճելի պաշտօնը: Քէմփը շատ հետաքրքրական տեղ էր: Հոն ծնունդ փողոցները կէս ռոք խորութեամբ ցեխով սալապատակուած կ'ըլլային եւ հոն քաղաղները յաճախ կ'օշկիկով կը մտնէին եւ առանց կ'օշկիկ դուրս կ'ելլէին: Իսկ ամառը ճամճերու եւ մծեղներու մեղեդին միանալով փողոցի փոշիին եւ ամէն տունէ եւ խանութ արտաշնչող մասնաւոր հոտերուն՝ թմբիկն մթնոլորտը կը դարձնէր խիստ ներշնչիչ: Եկեղեցիին շէնքը տախտակաշէն էր եւ հազարումէկ ճեղքերու շնորհիւ շատ օդասուն ամառ ու ծմեռ: Տանիքը մասնաւորաբար շինուած էր թիթեղ, որպէսզի Կիրակի օրեր պաշտամունքի ժամանակ իր վրայ նետուող քարերու ռմբածայն որոտումը ժողովուրդին յիշեցնէր աշխարհի վերջին օրերու արհաւիրքը:

Ես ալ՝ թմբիկի ձամիցի անարժան առջնորդ, պատիւ ունեցած եմ ճաշակելու այս բացառիկ վայելքները: Քէմփի տուները մեծաւ մասամբ շինուած էին երկյարականից առաջին յարկը կ'օգտագործուէր իբր գործատեղի, իսկ երկրորդ յարկը՝ իբր բնակարան: Բայց երբեմն այս երկուքը իրարու կը խառնուէին, ինչպէս որ պատահեցաւ իրիկուն մը, երբ պատուելին պսակի խորհուրդը կը կատարէր երկրորդ յարկի մը վրայ եւ սենեակը լեցուած էր խոռոչներով ժողովուրդով: Վերջապէս տախտակը տախտակ էր: Յանկարծ տախտակամանը տեղի տուաւ եւ միակտուր ինկաւ վար, հետը տանելով հարս ու փեսան, պատուելին եւ բոլոր հարսներունը, որոնք իրենք զիրենք առանց ասանետօրի գտան առաջին յարկին վրայ:

Դպրոցներ կը բացուին թէ՛ քաղաքին եւ թէ՛ թմբիկն մէջ: Վեր. Հատիտեան ամէն տեղ է: Յաճախ ստիպուած է նոյն ժամանակ մի քանի տեղ ըլլալ: Առտուան ժամը վեցէն մինչեւ կէս գիշեր քաղաքի ամէն կողմէն զինք տեսնելու եկող ժողովուրդը կ'ակնկալէ որ օրուան որեւէ ժամուն զինք տունը գտնէ: Գիշերային մնայուն այցելուներ ալ պակաս չեն ըլլար : Այդ օրերու Հօթել Սէն ճորճը պատուելին տունն էր: Իր տունը Ռաս Պէյրութի թրամվայի գիծին վրայ «Պէյք Վալի» կայարանին մօտ էր: Շատ հայեր կը կարծէին, թէ կայարանին անունը «Պատուելի» է: Օր մը իրեն կ'ըսեն. «Պատ. Հատիտեան, որքա՛ն ճանչցուած ես հոս, նոյնիսկ թրամվայիցները՝ քեզ գիտեն: «Պատուելի» ըսելով թիթե՛ կ'անենք, «Պատուելի» ըսելով կ'իջենք:

Գրեց ՏՈՔԹ. ԲԻԻԶԱՆԴ ՀՍՏԻՏԵԱՆ

ԱՆԹԱՊԱԿԱՆ ԱՍՈՅԹՆԵՐ

- * Ազգականի ըրածը կարիճը չ'ըներ:
- * Ալիւրի վրայ թափած իւրը կորուստ չէ:
- * Աղբ թափողը թիքը կը բռնէ:
- * Աղջիկ քեզի կ'ըսեն, հարսնուկ դո՛ւն իմացիր:
- * Աղջիկը տե՛ս լուացքի տաշտին ետեւ կամ բաղնիքը:
- * Ճամին ո՛րքան մեծ ըլլայ մոլլան իր գիտցածը կը կարդայ:
- * Անօթի մի՛ ձգեր՝ գող կ'ընես, շատ մի՛ խօսիր՝ կը շփացնես:
- * Անօթիին վիճակէն անօթին կը հասկնայ:
- * Առատածեռնի գրպանը ծակ կ'ըլլայ:
- * Աստուած ազգի մը որ պատուհաս պիտի տայ նախ մեծերը կ'աւանդէ:
- * Բարի անունը ոսկինն ու արծաթէն նախընտրելի է:
- * Բարկութեամբ ոտքի ելլողը վնասով կը մտնի:
- * Բարձ փոխելով բախտ չի փոխուիր:
- * Գաւազանի ցաւը կ'անցնի, զէշ խօսքին ցաւը կը մնայ:
- * Գաւաթ մը ջուր տուողին յիշատակը չի կորսուիր:
- * Գետին կը մայի՛ տուններ կը բանդէ:
- * Դուն քեզի օգնէ որ Աստուած ալ քեզի օգնէ:
- * Թթի հովիւը ուզէ թէթէյն (արու այծ) դալամա (կաթ) կը հանէ:
- * Երբ անձրեւ գայ, հաւերուն կեր տուող շատ կ'ըլլայ:
- * Զօրին (զօրաւոր) թեւը չի պրկուիր:
- * Զօրով գեղեցկութիւն չ'ըլլար:
- * Էշո՛ւ ամուր կապէ, դրացիդ գող մի հաներ:
- * Լերան վրայի կաքաւին հազարը մէկ փարայի է:
- * Լուրը կամ պգտիկէն առ կամ խեմբէն:
- * Խաղողը խաղողին նայելով կը սենայ:
- * Խելքի պակասութիւնը աչքի կուրութենէն աւելի վատ է:
- * Խօսք կայ խօսելիք, խօսք կայ կլլելիք:
- * Ծոյլին ըսեր են . օրը մէկ կանգուն կրնա՞ս քալել:
- * Հարցուցեր է՝ Լայնքի՞նք թէ երկայնքին:
- * Կալի մէջ աշխատող եզին դունչը չեն կապեր:
- * Կամքը որո՛ւ որ սիրէ, գեղեցկին ան է:
- * Հեռուի սուրբը զօրաւոր կ'ըլլայ:
- * Հիւրը հիւր չ'ուզեր, տանտէրը՝ երկուքն ալ:
- * Ձեռքը ձեռք կը լուայ, երկու ձեռքն ալ՝ երես:
- * Ձի, կին եւ գէնք վարձու չեն տրուիր:
- * Ձիւն ձի ընողը հեծնորդն է:
- * Ճամբայ մի՛ երթար անփորձի հետ, հազար փորձանք կը բերէ գլխուդ:
- * Ծննդուկը ի՞նչ է որ ծագը ի՞նչ ըլլայ:
- * Մահամերձ շունը մզկիթի մօտ կ'աղտոտ:
- * Մայրիկին անունը իր աղջկան օժիտ է:
- * Մեծ մարդիկ փոքր սխալ չեն գործեր:
- * Մեղը ձեռնողը իր մատը կը լիզէ:
- * Նայելով եթէ կարելի ըլլար արիեստ սորվիլ, շունը մտազործ կ'ըլլար:
- * Նուէր տրուած ծիւղ գլուխին չեն նայիր:
- * Շունը դրամի համար չէ որ կը հաջէ:
- * Ուրիշի ծիւղ մտողը շուտ վար կ'իջնէ:
- * Չեն հարցներ. որո՛ւ աղջիկն ես: Կ'ըսեն. որո՛ւ հարսն ես:
- * Պառկող շունի պոչին մի՛ կոխեր:
- * Վարպետի ապտակ չուտողը չի կրնար վարպետ ըլլալ:
- * Փուշը մտած տեղէն կը հանեն:
- * Օրուան մը պէտքիւնը «պէտքիւն» է:

4 ԳԱՒԱՌԱԲԱՐԲԱՌՆԵՐՈՒ ՀԱՍԱԴՐԱԿԱՆ ՏԱԽՏԱԿԸ

Աշխարհաբար	ՉԵՂԹՈՆ	Մարաշ	Հաճըն	Քեսապ
հաց	հոց	հոց	հոց	հուց
ջուր	ջոյ	ճոր	ջոյ	ջեօր
խօսք	խեօսք	ծրացք	զոյից	զորեօց
եկեղեցի	գիղիցե	իժոմ	իժոմ	կիղիցա
հայր	պօպ (տատա)	պօպ (պատա)	պօպ (հայրիկ)	պեօպ (տուն)
մայր	մէյ	մէր	մայիկ	մէար
տղաք	պլուզտէք	պլուզտէկ	պլուզտէկ	տղղէն
աղջիկ	աշկէն	ախճին	աջկին	էշկէն
երկու	իյկուք	իրկուք	էյկուք	իրկէք
երեք	իյիք	իրիք	ժիէք	ըրք
չորս	չիւս	չիւրս	չուէյս	չիւք
յիսուն	իստոն	իստուն	իստուն	իսսօն
հարիւր	հէյիյ	հերիր	հէյիյ	հէրէր
ես	իս	իս	եիէս	իս
դուն	դոն	դօն	դուն	դէուն
ան	էան	էն	ան	ան
ուտել	ուտիլ	ուտիլ	ուտիէլ	ուտիլ
ղնել	դըանիլ	դնիլ	դընիլ	դնիլ
երթալ	իյթուլ	ըրթիլ	իշթուլ	ուրթիլ
ըսել	ասիլ	ըսել	ասիէլ	ասիյ
հիմա	հուամօ	հըմմօ	հուամօ	համու
ինչպէս ես	չիճիս	չիճիս	ինչիցիէս	չիճիս
լաւ եմ	ըռանտ իմ	ըռնտ իմ	ըռնտ իէմ	աղվիւրիմ
Բարի լոյս	բայ լուս	պարա լաս	բայի լիէս	բարը լայս
տարի	տայը	տարա	տայի	տարա
շնորհաւոր	իշնիհաոր	իշնէվիւր	իշնավուէյ	շինէհվիւր

